ЮКЖД

ՀԱՐԱՎ-ԿՈՎԿԱՍՅԱՆԵՐԿԱԹՈՒՂԻ
Փակ Բաժնետիրական Ընկերություն
ՍԵՎԱՆԻ ԳԾԱՅԻՆ ՈՒՂԵՄԱՍ
«ՀԿԵ» ՓԲԸ

ЗакрытоеАкционерноеОбщество
ЮЖНО –КАВКАЗСКАЯ Ж/Д
«СЕВАНСКАЯ ДИСТАНЦИЯ ПУТИ»
ЗАО «ЮКЖД»

ՀՀ ք. Սևան

№ 438 30.06.2020թ.

Կոտայքի մարզի մարզպետ
Պարոն՝ Ռ. Պետրոսյանին

Հարգելի պարոն Պետրոսյան

Հարգելի պարոն Պետրոսյան, վերջին ժամանակներս «Հարավ-Կովկասյան Երկաթուղու» Սևանի գծային ուղեմասի երկաթուղու հարակից Ձեր վարչական տարածքներում, բազմիցս գրանցվել և ավելացել են մանր և խոշոր եղջերավոր անասունների վրաերթերի, կամ դրանց պատճառով շարժակազմի վթարային արգելակման դեպքերը: Այդ դեպքերը հանգեցնում են գնացքների անխափան երթևեկության խաթարմանը, ինչպես նաև Ձեր համայնքի բնակիչները կրում են նյութական վնասներ:

Մեր կողմից, բազմիցս կատարվել են բացատրական աշխատանքներ, Ձեր վարչական տարածքներում՝ համայնքների ղեկավարների հետ, սակայն դեպքերը կրկնվում են:

Ուստի ելնելով վերը նշվածից, հորդորում ենք Ձեզ բնակչության շրջանում կատարել բացատրական աշխատանքներ, հետագայում նման միջադեպերից խուսափելու համար, ինչպես նաև պահանջում ենք Ձեր միջամտությամբ իրազեկել համայնքի թե՛ ղեկավարներին և թե՛ ազգաբակչությանը, որ նման միջադեպերի հետևանքով, երկաթուղային շարժակազմին կամ գծին վնաս հասցնելու դեպքում, կկատարվի հետաքննություն, անասնատերերը կենթարկվեն պատասխանատվության՝ երկաթուղուն հասցված ողջ վնասի հատուցմամբ:

Հուշաթերթը՝ «Մանր և խոշոր եղջերավոր անասունների վրաերթերի, կամ դրանց պատճառով շարժակազմի վթարային արգելակման դեպքերի երկաթուղու տարածքում գտնվելիս», կցված է առանձին մեկ թերթիկի վրա:

Հարգանքներով՝
Սևանի գծային ուղեմասի պետ Ա.Փ. Մելոյան

Կատարող՝ Անվտանգության ինժեներ
Ն.Մ. Հովհաննիսյան (Հեռ. 099180828)

ՀՈՒՇԱԹԵՐԹ

Մանր և խոշոր եղջերավոր անասունների վրաերթերի, կամ դրանց պատճառով շարժակազմի վթարային արգելակման դեպքերի երկաթուղու տրանսպորտի տարածքում գտնվելիս

Հարգելիներս

Վերջին ժամանակներս «Հարավ-Կովկասյան Երկաթուղու» Սևանի գծային ուղեմասի երկաթուղու հարակից բնակավայրերում, որոնք տեղակայված են երկաթուղային գծերի անմիջական հարևանությամբ, ինչպես նաև այն բնակավայրերում, որոնք երկաթուղով բաժանված են երկու մասի, բազմիցս գրանցվել և ավելացել են մանր և խոշոր եղջերավոր անասունների վրաերթերի, կամ դրանց պատճառով շարժակազմի վթարային արգելակման դեպքերը:

Նման դեպքերը հանգեցնում են՝

- գնացքների անխափան երթևեկության խաթարմանը,
- վնաս է հասցվում երկաթուղային շարժակազմին կամ երկաթգծին
- համայնքի բնակիչները (անասնատերերը) կրում են նյութական վնասներ:
- համայնքի բնակիչները (անասնատերերը) ենթարկվում են պատասխանատվության՝ երկաթուղուն հասցված ողջ վնասի հատուցմամբ:

Գտնվելով երկաթուղու տարածքում, եղեք ուշադիր և զգույշ, մի անցեք երկաթուղային գծերի վրայով դրա համար չնախատեսված վայրերում և մի վազանցեք դրանք շարժվող գնացքի դիմացից: Հիշեք, որ գնացքը հնարավոր չէ անմիջապես կանգնեցնել: Երբեք մի անցեք գիծը կամ ճանապարհը, առանց նայելու երկու կողմերը: Գծի վրայով անցնելիս օգտվեք անցումային կամրջակներից և գծանցներից, ուղղորդվեք նշաններով, լսեք տրված ազդանշանները: Մի քայլեք փայտակոճղերի վրայով՝ մոտեցող գնացքը հետևից չի երևում: Հատկապես վտանգավոր է, երբ տիրում է աղմուկ հարակից գծով անցնող գնացքի պատճառով՝ հետևից եկողի ձայնը չեք կարող լսել:

Հիշեք, որ երկաթուղային տրանսպորտը, ինչպես նաև երկաթուղին համարվում է բարձր վտանգավորության գոտի: Սակայն վտանգավոր չէ նրանց համար, ովքեր հետևում են կանոններին, ովքեր ուշադիր և զգույշ են, կարգապահ են վտանգավոր գոտում: Իսկ երկաթուղային անվտանգության կանոնները պարզ են, պարզապես պետք է դրանք կատարել :

Հետևաբար, նման դեպքերից խուսափելու համար, երկաթուղու տրանսպորտի տարածքում գտնվելիս, անհրաժեշտ է պահպանել անձնական անվտանգության կանոնները:

Մի վտանգեք ձեր կյանքը՝

Պաշտպանեք ինքներդ ձեզ և մյուսներին տրանսպորտային դժբախտ պատահարներից՝